ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ »ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Աշակերտների ինքնուրույնության զարգացումը ակտիվ ուսուցման միջոցով

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ Վարդենիս

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հասմիկ Բեյբության

ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ՝ Քնարիկ Բաղեյան

ԴՊՐՈՑ՝ Ջաղացաձոր գյուղի միջնակարգ դպրոց

2022թ.

ՎԱՐԴԵՆԻՍ

Բովանդակություն

Ներածություն_____3

Գրական ակնարկ_____5

Փորձարարական հետազոտություն_____8

Խմբի նկարագիր_____10

Հետազոտության ընթացք_____10

Փորձարարական դաս 1_____11

Փորձարարական դաս 2_____13

Տվյալների մշակում և վերլուծություն_____15

Եզրակացություն_____16

Օգրագործված գրականության ցանկ_____18

Հավելված

Դասապլան 1

Դասապլան 2

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Իմ դասավանդած դասարաններում առկա խնդիրներից առանձնացրեցի ներկա ժամանակներում առավել արդիական համարվող ինքնուրույնության բարձրացումը, դարձնելով այն հետազոտության թեմա: Իմ առաջ խնդիր եմ դրել ընտրել և մշակել ուսուցմանը նպաստող այնպիսի մեթոդական մոտեցումներ, որոնք կնպաստեն խնդրի վերհանմանը և լուծմանը: Գիտական և նորարարական վերջին տվյալները յուրացնելու համար բավարար չէ միայն գրքային գիտելիքների ուսումնասիրությունը: Այն դառնում է ավելի հասանելի և պարզ, երբ ուղեկցվում է այլ գրականությամբ ևս: Ըստ այդմ շատ կարևոր է որպեսզի աշակերտները կարողանան ինքնուրույն աշխատել և գտնել որոշակի ինֆորմացիա, որն անհրաժեշտ է տվյալ ուսումնական նյութի յուրացման համար:

Նպատակ- Ինչու՞ է ինքնուրույնությունն այսքան կարևորում:
Պատճառն այն է, որ որևէ համակարգ չի կարող համարվել զարգացած կամ զարգացող, եթե այն ինքնուրույն չէ: Ցանկացած կախյալ վիճակ համարվում է ավելի ցածր մակարդակում գտնվող համակարգ, քան ինքնուրույնությունը:
Ի՞նչն է անձի անհատական զարգացման գործընթացում խթանում ինքնուրույնության ձևավոնմանը:

Առաջին հերթին, կարևոր է չխանգարել տվյալ որակի ձևավորմանը, քանի որ ինքնուրույնությունն անձին ներհատուկ ու բնազդային հատկություն է. մարդն իր ծնված օրվանից ի վեր ձգտում է ինքնուրույնության: Օրինակ՝ տարբեր տարիքային փուլերում երեխան փորձում է իրեն հասանելի թվացող գործողությունները կատարել ինքնուրույն: Այսինքն՝ սա մի բնազդային հատկություն է , որ երեխան ունի, և եթե մենք չեք խանգարում այս հատկության զարգացմանը , ապա այն ինքնաբուխ զարգանում է և արդյունքում ունենում ենք կայացած անձ և անհատ, ով հստակ գիտակցում է ինչ է ցանկանում, ինչպիսի հնարավորություններ ունի իր ցանկություններին հասնելու համար և ինչ է իրենից պահանջվում լրացուցիչ:

Ըստ հոգեբան Անուշ Ալեքսանյանի Երեխայի ինքնուրույնության ձևավորմանը նպաստում է նաև նրան ազատելը սխալվելու վախից: Միայն սխալվելու վախ չունեցող մարդիկ կարող են ինքնուրույն լինել: Ինքնուրույն մարդիկ փորձում են հավատարիմ

լինել սեփական ցանկություններին և ինքնուրույն մարդիկ կարողանում են ավելի իրատեսորեն գնահատել իրենց հնարավորություններն ու կարողությունները: Մնացած բոլորը հավատում են արտաքին աշխարհից եկած գնահատականներին և իրատեսորեն չեն գնահատում սեփական կարողությունները: Ինքնուրույն մարդիկ պատասխանատու են վերաբերվում սեփական քայլերին: Եվ ի վերջո, սա այն որակնէ, որի կարիքը մենք ունենք անկախ քաղաքացու ձևավորման գործընթացում:

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Իմ առջև դրված խնդրի լուծման և նպատակին հասնելու համար, որպես արդյունավեր ռազմավարություն ընտրել եմ ակտիվ ուսուցումը: Ակտիվ ուսուցումը ենթադրում է այնպիսի մեթոդների համակարգի կիրառում, որը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն, այլև ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում: Ուսուցման ճանաչողական գործընթացը ակտիվացնելու համար կիրառվում են ուսուցման ավանդական մեթոդները՝ օգտագործելով այնպիսի հնարներ, ինչպիսիք են պրոբլեմային իրավիճակի ստեղծումը, հարցադրումը՝ ներառելով պրակտիկ վարժություններ, խնդիրներ: Իհարկե, ակտիվ մեթոդների կիրառումը ուղղված է առաջնային գիտելիքի ձեռք բերմանը, մտածողության զարգացմանը, հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը, սակայն պետք է հաշվի առնել, որ այդ գործընթացը բավականին ժամանակ է պահանջում և այդ պատճառով անհնար է անցկացնել ողջ ուսուցումը միայն ակտիվ մեթոդներով: Դրանց հետ զուգահեռ կիրառվում են նաև ավանդական մեթոդներ, ինչպիսիք են պատմելը, բացատրելը, դասախոսությունը:

Ակտիվ մեթոդները պետք է կիրառվեն ուսուցման գործընթացի այն հատվածում, երբ անհրաժեշտ է զարգացնել ուսանողի մտածողությունը և ճանաչողական ակտիվությունը: Բայց կարևոր է նաև նշել, որ ակտիվ մեթոդների մեծամասնությունը բազմաֆունկցիոնալ նշանակություն ունեն ուսուցման գործընթացում: Օրինակ, կոնկրետ իրավիճակների վերլուծությունը կարող է ունենալ ուսուցման երեք նպատակ.

- Համախմբել դասախոսության ընթացքում ձեռք բերված նոր գիտելիքները,
- Կատարելագործել արդեն ձեռք բերած մասնագիտական հմտությունները,
- Ակտիվ ուսուցման մեթոդները ենթադրում են օգտագործել այնպիսի մեթոդների համակարգ, որոնց ժամանակ ուսուցիչը չի մատուցում պատրաստի գիտելիքներ, այլ ուսանողների կողմից գիտելիքի ինքնուրույն ձեռք բերում՝ ակտիվ

ճանաչողական գործունեության ընթացքում[1]:

Ցուցադրությունը (դեմոնստրացիա) ուսումնառողներին՝ երևույթներին, գործընթացներին, օբյեկտներին բնական վիճակում զննական-զգայական ձևով ծանոթացնելն է: Պատկերազարդումը (իլյուստրացիա) ենթադրում է առարկաների, երևույթների ցուցադրումն ու ընկալումը դրանց սիմվոլիկ պատկերներով: Այս մեթոդի

անվանման հիմքը անգլ. *action- փոխազդեցություն* բառն է: Սկզբնական շրջանում այսպես էր անվանվում ուսումնական պարապմունքների մի որոշակի տարբերակ, որն աշակերտներին միմյանց հետ հաղորդակցվելու, ուսումնասիրվող հարցը համատեղ քննարկելու, բանավեճային իրադրություններում ակտիվ մասնակցելու և տվյալ հարցի վերաբերյալ սեփական պատկերացումները ձևավորելու բարենպաստ հնարավորություններ էր տալիս: Հետագայում ավելի տարածվեց «ինտերակտիվ մեթոդներ» բառակապակցությունը, որը ներառում էր վերոհիշյալ հնարավորություններով դրսևորվող ուսումնական պարապմունքների կազմակերպման մի շարք համանման տարբերակներ:

Կան ուսուցման ակտիվ մեթոդների տարբեր դասակարգումներ: Սա պայմանավորված է նրանով, որ դեռ չկա ակտիվ մեթոդների համընդհանուր ընդունված սահմանում: Այսպիսով, երբեմն ԱՈՒՄ հասկացությունը ընդարձակում են՝ դրանց թվին դասելով ուսուցման ժամանակակից այնպիսի ձևեր, ինչպիսիք են՝ ինտերակտիվ սեմինարը, թրենինգները, պրոբլեմային ուսուցումը, ուսուցում համագործակցությամբ, ուսուցողական խաղեր և այլն:

Ակտիվ ուսուցման մեթոդները — մեթոդներ են, որոնք նպաստում են ուսանողների ճանաչողական գործունեությունը: Կառուցված են հիմնականում երկխոսության վրա, որը ենթադրում է մտքերի ազատ փոխանակում կոնկրետ խնդրի լուծման ուղիների վերաբերյալ: ԱՈՒՄ-ը բնութագրվում է ուսանողների ակտիվության բարձր մակարդակով: Տարբեր մեթոդներով ուսուցման և կրթական-արտադրական արդյունավետ գործունեության ակտիվացման հնարավորությունները բազմազան են, դա կախված է համապատասխան մեթոդի բնույթից ու բովանդակությունից, կիրառման ձևից և ուսուցչի հմտությունից: ԱՈՒՄ-ը – մեթոդներ են, որոնք մատուցվող կրթական

նյութերի յուրացման գործընթացում ապահովում են ուսանողների ակտիվությունը, մտածական և պրակտիկ գործունեության բազմազանությունը։ ՈՒԱՄ-ը հիմնված են պրակտիկ գործողությունների իրականացման, խաղային գործունեության և ուսուցման ստեղծագործական բնույթի, ինտերակտիվության, հաղորդակցման, երկխոսության, ուսանողների գիտելիքների և փորձի օգտագործման, խմբային աշխատանքի, գործընթացում բոլոր զգայարանների ներգրավման, շարժման և ռեֆլեքսիայի վրա։ ՈՒԱՄ-ի կրառմամբ ուսուցման գործընթացի արդյունավետությունը և արդյունքները պայմանավորված են նրանով, որ մեթոդների ստեղծումը հիմնվում է լուրջ հոգեբանական և մեթոդաբանական գիտելիքի վրա[2]

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Եվ այսպես համադրելով ունեցած խնդիրներն ու դրա լուծման համար նախատեսած ռազմավարությունը սկսեցի հետազոտական աշխատաքս հաշվի առնելով մի քանի կարևոր փաստեր՝

- Հետազոտական աշխատանքի թեման պետք է համապատասխանեցնեմ ուսումնական ծրագրին
- Հետազոտությունն անցկացնեմ միջին օղակում / քանի որ աշխատում եմ միջին դպրոցում

Այս դասարանի առկա խնդիրներից առանձնացրել էի չորս հիմնական խնդիրներ.

1. Սովորողների մոտ հետաքրքրության առաջացում
2. Ինքնուրույն աշխատելու ցանկություն և կարողություն
3. Վերլուծական մտածողության զարգացում
4. Համագործակցելու կարողություն

Սակայն կարծում եմ առաջնահերթությունը պետք է տամ ինքնուրույնության բարձրացմանը, որովհետև կարծում եմ, որ զարգազնելով ինքնուրույն աշխատելու կարողություն աստիճանաբար կարող եմ հասնել նաև վերոնշյալ մնացած խնդիրների լուծմանը:Ունենալով հստակ ռազմավարություն հույս ունեմ վերջում ստանալ ինձ հուզող հարցի պատասխանները, որոնք ի սկզբանե ուղորդեցին ինձ ընտրել թեման և առաջնորդվել դրանով: Առանձնացրել եմ այդ հարցերից կարևորագույնները:

- Կբարձրացնի արդյոք աշակերտների ինքնուրույնությունը, ակտիվ ուսուցման մեթոդով:
- Կառաջանա աշակերտների մոտ համագործակցելու ցանկություն
- Կցանկանան հետագայում սովորել ակտիվ ուսումնառության ձևով

Որպես հետազոտության տիպ եմ ընտրել հետազոտության բնական տիպը: Ըստ որի Փորձարկումն անցկացնելու եմ մանկավարժական բնականոն գործընթացի սահմաններում: Այժմ ներկայացնեմ, թե ինչպիսի քայլերի հերթականությամբ եմ աշխատելու.

Հետազոտությանը մասնակից են լինելու դասարանի բոլոր աշակերտները: Իմ հետազոտական աշխատանքին ես ունենալու եմ ակտիվ մասնակցություն:

Հավաքագրված տվյալները հիմք են հանդիսանալու հետազոտության տեքստը կազմելու համար: Արդյունքները հավաքագրելու եմ գրաֆիկների և աղյուսակների միջոցով

ԽՄԲԻ ՆԿԱՐԱԳԻՐ

Հետազոտությունը կատարել եմ Ջաղացաձորի միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանում, որտեղ սովորում են 8 աշակերտներ ՝ 5 տղա 3 աղջիկ: Ընդհանուր առմամբ դասարանը ակտիվ է, շատ են լավ տրամաբանություն ունեցող աշակերտները, սակայն ունեն մոտիվացման կարիք, որն էլ ուղորդվում է ծուլությամբ: Դասարանում տիրում է առողջ մթնոլորտ, սակայն համագործակցությունը այդքան էլ արտահայտված չէ: Դասարանը նախաձեռնող է, սիրով մասնակվում են համադպրոցական բոլոր միջոցառումներին:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ

Չշեղվելով ծրագրային պլանավորումից ընտրեցի առաջին դասի թեման՝ Թեմա 6 դաս 1՝ Խորհրդային հայաստանի տարածքային հիմնախնդիրները 1920-1922 թթ

Ձեռքի տակ ունենալով աշակերտի ինքնուրույն և ամփոփիչ աշխատանքի արդյունքները պլանավորեցի հետազոտական առաջին դասը: Աշակերտներին նախապես ներկայացրեցի, որ անցկացվելու են երկու դասեր, որոնցից մեկը դասախոսության ձևով /պասիվ/, իսկ մյուսը որպես միջամտություն՝ ակտիվ ուսուցման միջոցով, որի ժամանակ նրանց կողմից կատարվելու են ինքնուրույն աշխատանքներ (իմ կողմից հանձնարարվելու է միայն ինքնուրույն աշխատանքի թեման, իսկ աղյուսակների կազմումն ու լրացումը կատարվելու է իրենց ցանկությամբ և նախընտրած տարբերակով): Երկրորդ դասին գրելու են գործնական գրավոր աշխատանք, իսկ առաջին ու երկրորդ դասերին լրացնելու են աշակերտի անկետա որում պետք է ընտրություն կատարեն՝ նախապատվությունը տալով երկու դասերից որևէ մեկին (մեթոդով թե առանց մեթոդի):

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 1

Այժմ անդրադառնամ առաջին դասին: Քանի որ նախորդ դասը Խորհրդային Հայաստանի սահմանադրություն թեման էր, ապա նրանց հանձնարարել էի համեմատել Հայաստանի առաջինն հանրապետության խորհրդանիշները (դրոշ, օրհներգ, զինանշան) ՀԽՍՀ խորհրդային հայաստանի խորհրդանիշների հետ: Արդյունքները ընդհանուր առմամբ բավարար էին (չնայած նրան, որ մոտ 2աշակերտ այն չէր կատարել): Ինձ հաճելիորեն զարմացրեց այն փաստը, երբ ցածր առաջադիմություն ունեցող աշակերտներից մեկը, որը դասերին ցուցաբերում էր մեծամասամբ պասիվություն, այդ հանձնարարությանը հանդես եկավ հետաքրքիր արձագանքով: Նա պարզապես խնդրեց, որ թույլ տամ հնչեցնի բջջային հեռախոսի մեջ իր կողմից նախապես ձայնագրված Արամ Խաչատրյանի հեղինակած ՀԽՍՀ օրհներգը:Համեմատությունը պետք է կատարվեր ոչ միայն Վենի դիագրամով, այլև T-աձր և M-աձև աղյուսակներով: Նրանց հանձնարարել էի նաև ՀԽՍՀ սահմանադրությունից առանձնացնել երկու հոդված: Մեծամասնությունը կատարել էին առաջադրանքը: Այս եղանակով ստուգելով տնային առաջադրանքները և կատարելով բոլոր քննարկումները անցա նոր նյութի հաղորդմանը: Մինչ նոր նյութի հաղորմանն անցնելը կազմակերպեցի մտագրոհ հարցադրումների միջոցով, որն էլ կապ ստեղծեց հին և նոր դասերի միջև: Նոր դասի յուրաքանչյուր առանցքային հատվածի համար նախատեսել էի հարցեր, որոնց համատեղ պատասխանները բերեցին կարճ դասախոսությամբ համեմված նյոթի հաղորդմանը: Դասի ամփոփման հատվածի համար քարտեզի վրա հանգամանորեն ցույց տվեցի ըստ Մոսկվայի պայմանագրի ՀԽՍՀ կողմից հաստատված և գծված սահմանագիծը, ըստ որի Հայաստանի նոր սահմանը անցնելու էր Ախուրյան գետով կչճատվելու էր կազմելով 29740 կմ^2: Այստեղ նախատեսել էի նաև M-աձև աղյուսակ, որը ներկայացվեց գրատախտակին և աշակերտների անմիջական մասնակցությամբ որոշակի չափով լրացվելուց հետո հանձնարարեցի այն լրացնել տետրերում, որպես տնային աշխատանք: Համեմատելով 20-ական թվականների հայ-ռուսական գործընկերային հարաբերությունները և այսօրվա հայ-ռուսական գործող հարաբերությունները ավարտեցինք առաջին դասը: Այս բոլոր աշխատանքները ունեյին հետևյալ նպատակները.

- Վերլուծել պայմանագրի դրույթներն ու պատմական նշանակությունը հայ ժողովրդի կյանքում (Հայաստանի պատմական տարածքի շարունակական կորուստ 30 000 կմ^2)
- Համեմատելով հայ-թուքական 1920 թվականի և 2021 թվականի հայ-ադրբեջանական 44 օրյա պատերազմները՝ պատմությունից դասեր քաղել

Ընդհանուր առմամբ դասն անցավ տրամադրող միջավայրում աշակերտները պատասխանում էին հարցերին, իհարկե ունենալով որոշակի վրիպումներ ևս:

Դասի վերջում աշակերտներին տվել եմ անկետաներ որտեղ նրանք պետք է ընտրեին հետագա սպասվելիք դասընթացի կատարվող մեթոդը (ուզում են դասը անցկացվի պասիվ, թե ակտիվ ուսումնառության միջոցով

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 2

Հետազոտական երկրորդ դասը տեղի է ունեցել նույն դասարանում: Հետազոտական (փորձարարական) դասը իմ կողմից կատարվեց ակտիվ ուսուցման ձևով, որի իրականացման համար նախատեսել էի քարտեզի օգնությամբ տալ հակիրճ բնութագիր սահմանային երեք հիմնախնդիրների վերավերյալ: Ներկայացրեցի դասը հատվածներով զուգահեռ անցկացնելով մերօրյա սահմանային հիմնախնդրին և քարտեզի վրա ցուցադրեցի սահմանները (ցուցադրեցի Արցախը, Լոռին, Նախիջևանը, Զանգեզուրը և այլն): Ապա շատ չմանրամասնելով տարածքային տվյալ ժամանակաշրջանի հակահայկական որոշումները տրամադրել եմ ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված աղյուսակներ որտեղ առկա են դասի առանցքային կետերը: Կարճ բացատրական տեսաֆիլմից հետո աշակերտները սկսում են կատարել ինքնուրույն աշխատանքի լրացում: Այս փոլում թույլ եմ տալիս նաև աշակերտների որոշակի խմբերի միջև համագործակցություն, որը մոտիվացնում է թույլ սովորողաշակերտներին ձգտել առավելագույնս շատ լրացնել հանձնարարված աշխատանքը: Նշեմ այն, որ ինքնուրույն աշխատանքի բովանդակությունը (բարդությունը) հավասար էր բոլորի համար և որոշել էի տարբերակում չանել (նախապես հայտնեցի,որ այն աշակերտները որոնք կդժվարանան ողջ նյութի լրացմանը,

առանձնացնեն միայն դասի Զանգեզուրի հերոսամարտ հատվածը), միևնույնժամնակ միմիանց օգնելու հնարավորության շնորհիվ թույլ սովորողները միտված ենլրացնելու աղյուսակի բոլոր հատվածները, որի նպատակն է այս եղանակով ստեղծել հետաքրքրություն (շահագրգռվածություն հաղթանակած զգալու) աշխատանքի ընթացքում: Աշխատանքի կատարման համար աշակերտներին տրամադրել էի 15 րոպե ժամանակ: Ի ուրախություն ինձ աշակերտները աշխատանքն ավատեցինն ճիշտ ժամանակին և անցանք աշխատանքների կամավոր ներկայացմանը:

Աշակերտը իր թերթիկից օգտվելով ներկայացնում է իր աշխատանքը կատարվում է խմբային լրացումներ, սխալների դեպքում նաև աշակերտների փոխադարձ շտկումներ: Ավարտելով միտքը տեղը զիջում էր ընկերոջը: Սակայն հաջորդ ներկայացնողը պետք է ներկայացներ այնպիսի տվյալներ որոնք նախորդ մասնակցի

կողմից վրիպվել էին: Սրա նպատակն է՝ (Հավելված 7)

- Աշակերտների ուշադրության կենտրոնացումը
- Մտապահելու և վերարտադրելու կարողության ձևավորումը
- Սովորել սովորեցնելու հմտության զարգացումը
- Համագործակցելու կարողությունը
- Ինքնուրույն աշխատելու, իր աշխատանքը վերլուծելու և տեսակետը հիմնավորելու հմտության զարգացում

Ամփոփելով տվյալները բաժանում եմ գործնական աշխատանքի համատեքստը որը նախատեսել եմ 15 րոպեյի համար գնահատման համար որպես չափանիշ առաջնորդվել եմ Բլումի տաքսոնոմիայով : Որպես տնային առաջադրանք հանձնարարեցի թեմա 6-ի առաջին և երկրորդ դասերի ամփոփում:

Գործնական աշխատանքի հանձնելուց հետո աշակերտներին եմ տրամադրում աջաջին դասին տրամադրված աշակերտի անկետան այս դեպքում աշակերտներն արդեն լրիվ պարզ էմեթոդների միջև իրականացվող ընտրությունը (ակտիվ ուսուցում, պասիվ ուսուցում): Հարցման նպատակն է ըստ աշակերտների պատասխանների հասկանալթե որ դասն էր ավելի հաջողված և հետագայում որ մեթոդով կուզենային կազմակերպել դասպրոցեսները: Երկրորդ դասի աշակերտի անկետայի ներքևում ավելացրել էի հարցեր, որոնց միջոցով կարևորելու եմ իմ կատարած աշխատանքի ընկալումը աշակերտների կողմից: Աշակերտներին խնդրել եմ անանուն անկետաների ներքևում կոնկրետացնել պատասխանները տալովպարզաբանումներ՝

- Ինչը ձեզ դուր եկավ և ինչու ——————————————————————
- Ինչը ձեզ դուր չեկավ և ինչու——————————————————————
- Ինչը կփոխեյիք ——————————————————————————————

Հավաքելով այս ամենը պլանավորում եմ գործնական աշխատանքների ստուգումից հետո կատարել արդյունքների հավաքագրում, մշակում և վերլոծություն:

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒՈՒԹՅՈՒՆ

1. Երկրորդ դասին շատ էին համագործակղող աշակերտները
2. Էականորեն ավելացել են նաև զուգահեռներ անցկացնող և կանխատեսող աշակերտների թիվը։
3. Աճ է նկատվել հետևություններ անող, տեսակետներ արտահայտող և հարցեր առաջադրող սովորողների թիվը։ Նկատվեց նաև աշակերտների ակտիվության բարձր ցուցանիշ, իսկ անտարբեր աշակերտներ չկային, բոլորն էլ աշխատում էին իրենց ուժերի ներածի չափով։

Առաջին հետազոտական դասի ժամանակ անբավարար գնահատական ստացել են մեկ աշակերտ, իսկ երկրորդ դասին՝ անբավարար գնահատական ստացող աշակերտներ չկան։ Դրական շեմը հաղթահարողների թիվը մեծ էր։ 4-6 միավոր առաջին դասին ստացել են երկու աշակերտ, իսկ երկրորդ դասին՝ երեք։
7- 8 միավոր՝ երկու աշակերտ (առաջին դաս), երեք աշակերտ (երկրորդ դաս)
9-10 միավոր՝ երեք աշակերտ (առաջին դաս),երկու աշակերտ (երկրորդ դաս)։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Ըստ աշակերտի ինքնուրույնությունը բնորոշող անկետայի փորձագետն արձանագրել է,որ հետազոտական երկրորդ դասին առաջին դասի համեմատ վերլուծող աշակերտների թիվը ավելացել է 4-ով (հավելված 1)
2. Զուգահեռներ անցկացնող սովորողների թիվը առաջին դասին երեքն էին, իսկ երկրորդ դասին՝ յոթը (հավելված 1)
3. Ակտիվ դասապրոցեսի ժամանակ բարձրացավ աշակերտների ներգրավածությունը, ինչն էլ նպաստեց տեսակետներ առաջադրող, հետևություններ անող սովորողների թվի մեծացմանը:
4. Հետևություններ անող աշակերտների թիվը ավելացավ 4-ով, իսկ տեսակետներ աշաջադրողների թիվը՝ 6-ով(հավելված):
5. Ակտիվ ուսուցման միջոցով պարզեցի, որ աշակերտներին դուր է գալիս ինքնուրույն վերլուծություններ անել
6. Հետազոտության երկու դասերի վերաբերյալ տեղեկությունների հավաքագրման, արդյունքների ամփոփման, սովորողի կողմից տրամաբանական մտածողության դինամիկայի դիտարկումը ցույց տվեց, որ հետազոտության ընթացքում ինքնուրույն աշխատող աշակերտների մակարդակը բարձրացել է:

Այսպիսով, վերլուծելով տվյալներն արդյունքները՝ եկա այն եզրահանգման, որ ակտիվ ուսուցման մեթոդներ նշանակում է ուսուցում՝ գործունեության մեջ: Լ.Ս.Վիգոտսկին[6] ձևակերպել է օրենք, որտեղ ասվում է, որ ուսուցմանը հետևում է զարգացումը, իսկ անձը զարգանում է գործունեության մեջ: Ակտիվ մեթոդների հիմքում ընկած է երկխոսությունը, ինչպես ուսուցչի և ուսանողների միջև, այնպես էլ իրենց, ուսանողների միջև: Երկխոսության ընթացքում զարգանում հաղորդակցման հմտությունները, խնդիրները միասին լուծելու կարողությունները, և ամենակարևորը զարգանում է ուսանողների խոսքը: Ակտիվ ուսուցման մեթոդների կիրառման նպատակն է ուսանողներին ներգրավել ինքնուրույն իմացական գործունեության մեջ, ստեղծել անձնական շահագրգռվածություն ցանկացած ճանաչողական խնդիրներ լուծելու համար, սովորեցնել կիրառել ուսանողների կողմից ձեռք բերված գիտելիքները: Ակտիվ մեթոդների նպատակն այն է, որ գիտելիքների և հմտությունների ձեռք բերման գործընթացում ընդգրկվեն բոլոր հոգեկան գործընթացները (խոսքը, հիշողությունը, երևակայություն և այլն): Ակտիվ մեթոդները զուգակցվում են իլյուստրատիվ մեթոդների հետ, կատարվում են մեխանիզմների, մոդելների, գծագրերի, ինչպես նաև ֆիլմերի, սլայդների, հետաքրքիր նյութերի ցուցադրություններ[4]:

Ցուցադրությունը (դեմոնստրացիա) ուսումնառողներին՝ երևույթներին, գործընթացներին, օբյեկտներին բնական վիճակում զննական-զգայական ձևով ծանոթացնելն է: Պատկերազարդումը (իլյուստրացիա) ենթադրում է առարկաների, երևույթների ցուցադրումն ու ընկալումը դրանց սիմվոլիկ պատկերներով: Այս մեթոդի անվանման հիմքը անգլ. action- փոխազդեցություն բառն է: Սկզբնական շրջանում

այսպես էր անվանվում ուսումնական պարապմունքների մի որոշակի տարբերակ, որն աշակերտներին միմյանց հետ հաղորդակցվելու, ուսումնասիրվող հարցը համատեղ քննարկելու, բանավեճային իրադրություններում ակտիվ մասնակցելու և տվյալ հարցի վերաբերյալ սեփական պատկերացումները ձևավորելու բարենպաստ հնարավորություններ էր տալիս: Հետագայում ավելի տարածվեց «ինտերակտիվ մեթոդներ» բառակապակցությունը, որը ներառում էր վերոհիշյալ հնարավորություններով դրսևորվող ուսումնական պարապմունքների կազմակերպման մի շարք համանման տարբերակներ[5]:

Ակտիվ մեթոդները ապահովում են կրթական խնդիրների լուծումը տարբեր տեսանկյուններից.

- Ուսումնական դրական խթանի ձևավորում,
- Ուսանողների ճանաչողական ակտիվության բարձրացում.
- Կրթական գործընթացին ուսանողների ակտիվ ներգրավում.
- Ինքնագործունեության խթանում,
- Ճանաչողական գործընթացների զարգացում - խոսք, հիշողություն, մտածողություն
- Ուսումնական նյութի առավելագույն մասի արդյունավետ յուրացում,
- Ստեղծագործական մտածելակերպի զարգացում,
- Ուսանողի անհատական հաղորդակցական-զգայական ոլորտի զարգացում,
- Ուսանողի անհատական-յուրահատուկ հնարավորությունների բացահայտում և զարգացում,
- Ինքնուրույն աշխատանքի համար հմտությունների զարգացում:

Ակտիվ ուսուցումը ուսուցիչների և աշակերտների միջև փոխգործակցություն է, որտեղ ուսուցիչները և աշակերտները շփվում են միմյանց հետ դասի ժամանակ, և սովորողները այլևս պասիվ ունկնդիրներ չեն, այլ դասի ակտիվ մասնակիցներ: Եթե պասիվ մեթոդի ժամանակ դասի հիմնական գործող անձը ուսուցիչն էր, ապա այստեղ ուսուցիչ-աշակերտ փոխազդեցությունը հավասար մակարդակի վրա են՝ սուբյեկտ սուբյեկտային փոխհարաբերություններ: Պասիվ ուսուցումը ենթադրում է ուսուցում ավտորիտար ոճով, իսկ ակտիվ ուսուցումը ժողովրդավարական ոճով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Балаев А.А. Активные методы обучения. М., 2006.
2. Смолкин А.М. Методы активного обучения. М., 1991.
3. Анцибор М.М. Активные формы и методы обучения. Тула 2002
4. Выготский Л.С. Педагогическая психология.
5. https://hy.wikipedia.org/wiki/%D4%BC%D6%87_%D5%8E%D5%AB%D5%A3%D5%B8%D5%BF%D5%BD%D5%AF%D5%AB

Դասապլան 1
Ուսուցչուհի՝ Քնարիկ Բաղեյան
Ամսաթիվ՝ 04.03.2022թ.
Դասարան՝ 9-րդ

Թեմա՝	Թեմա 6. Խորհրդային Հայաստանի տարածքային հիմնախնդիրները (1920-1922թթ.) Դաս 1-2. Պայքար Լոռու, Ջավախքի, Նախիջևանի, Զանգեզուրի և Արցախի համար
Օգտագործվող նյութեր՝	Քարտեզ , դասագիրք
Հիմնական հասկացություններ	• Հայկական հարց • Հայ-թուրքական սահմանագիծ, • Ջավախքի Լոռու, Նախիջևանի, Արցախի հիմնախնդիրներ • Ալեքսադրապոլի պայմանագիր
Դասի նպատակը՝	Աշակերտները կիմանան, թե երբ է կնքվել Մոսկվայի պայմանագիրը, կկարողանան վերլուծել պայմագրի էությունը, բովանդակությունը, գնահատել պայմանգրի պատմական նշանակությունը հայ ժողովրդի կյանքում, համեմատականներ տանել 1920թ հայ-թուրքական և 2021թ հայ-ադրբեջանական 44 օրյա պատերազմների միջև
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ
Վերջնարդյունքները	Սովորողը կկարողանա • նկարագրել հայ-թուրքական և հայ-ռուսական հարաբերությունները 1920թ Մոսկվայի պայմանգրի կնքման համատեքստում • թվարկել պայմանգրի առանցքային կետերը • առանձին ներկայացնել հայ-վրացական, հայ-թուրքական և հայ-ադրբեջանական սահմանային հիմնախնդիրները • համեմատել հայ-վրացական, հայ-թուրքական և հայ-ադրբեջանական սահմանային հիմնախնդիրները • վերլուծել հայկական կողմի սխալներն ու պատճառները, որոնք հանգեցրին սահմանային կորուստին
Դասի մեթոդներ	• Կարճ դասախոսություն • Մտագրոհ • Մ-աձև աղյուսակ • ԽԻԿ համակարգ

<table>
<tr><td>Դասի ընթացքը</td><td>

Սկիզբ.7-10 ր՝ խթանման փուլ-Մտագրոհման մեթոդի կիրառմամբ, հարց ու պատասխանի միջոցով ներկայացնել

- Ինչ արտաքին քաղաքական գործունեություն էր ծավալում ՀԽՍՀ-ն
- Որոնք էին Խորհրդային Ռուսաստանի դիրքորոշումները Խորհրդային Հայաստանի հետ հարաբերություններում
- Համեմատելով զուգահեռներ անկցանել ՌԴ և ՀՀ այժմյան հարաբերությունները 1920-ական հայ-ռուսական հարաբերությունների միջև
- Նշել մեկ դրական և մեկ բացասական կողմ հայ-ռուսական գործնկերային հարաբերություններում

15-20 ր՝ իմաստի ընկալման փուլ- Կարճ դասախոսության միջոցով սահուն կատարելով ներկայացնել նոր թեման՝ Հայակական սահմանային հիմանխնիրները.

- 1921թ մարտի 16 –ի Մոսկվայի և հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանգրերը
- համեմատել հայ-վրացական, հայ-թուրքական և հայ-ադրբեջանական սահմանային հիմնախնդիրները
- նկարագրել այդ հիմնախդիրների հանգուցալուծումը՝ փաստելով , որ Կարսի պայմանգիրը Մոսկվայի պայմանագրի ամբողջական կրկնությունն էր

7- 10 ր՝ կշռադատման փուլ- Ամփոփելով թեման՝ իմի բերել դասի առանցքային կետերը, գրատախտակին գծել և աշակերտների մասնակցությամբ լրացնել «պատմական փաստերի» Մ-աձև աղյուսակը

<table>
<tr><td>Հիմանհարց</td><td>տարեթիվ</td><td>արդյունք</td></tr>
<tr><td></td><td></td><td></td></tr>
</table>

</td></tr>
<tr><td>Գնահատում</td><td>Հայեցի, գրագետ և վերլուծկան մտքեր արտահայտած 3 աշակերտի գնահատել</td></tr>
<tr><td>Տնային հանձնարարություն</td><td>

- Թեմա 6. Խորհրդային Հայաստանի տարածքային հիմնախնդիրները (1920-1922թթ.). Դաս 1.Մոսկվայի և Կարցի պայմանագրեր.
- Տետրերում լրացնել վերոնշյալ Մ-աձև աղյուսակը

</td></tr>
</table>

Դասապլան 2
Ուսուցչուհի՝ Քնարիկ Բաղեյան
Ամսաթիվ՝ 04.03.2022թ.
Դասարան՝ 9-րդ

Թեմա՝	Թեմա 6. Խորհրդային Հայաստանի տարածքային հիմնախնդիրները (1920-1922թթ.) Դաս 1-2. Պայքար Նախիջևանի, Զանգեզուրի և Արցախի համար
Օգտագործվող նյութեր՝	Քարտեզ , դասագիրք
Հիմնական հասկացություններ	• Գարեգին Նժդեհ • Լեռնահայաստան • Ինքնավար Սյունիք • Նախիջևանի, Արցախի հիմնախնդիրներ
Դասի նպատակը՝	Աշակերտները կիմանան, թե երբ և ում գլխավորությամբ էտեղի ունեցել Զանգեզուրի ինքնապաշըպանությունը, կկարողանան վերլուծել պատմական իրադարձությունները ժամանակագրական հերթականությամբ, գնահատել հայ ժողովրդի միասնականությունը, պայքարի ոգին, համեմատականներ տանել Զանգեզուրի ինքնապաշտպանական մարտերի և 2021թ հայադրբեջանական 44 օրյա պատերազմների միջև
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ
Վերջնարդյունքները	Աշակերտը կկարողանա • նկարագրել 1921թ Արցախի և Նախիջևանի հանձնումը Ադրբեջանին, որն ամրագրվել է 1921թ հունիսի 5-ին • թվարկել պայմանգրի առանցքային կետերը • առանձին ներկայացնել Գ. Նժդեհի գլխավորած Զանգեզուրի հերոսամարտը, որի արդյունքում ստեղծվում է ինքնավար Սյունիքը՝ Լեռնահայաստանը: • վերլուծել Սյունիքի դերը հայ ժողովրդի պետականության մեջ
Դասի մեթոդներ	• Կարճ դասախոսություն • Մտագրոհ • Մ-աձև աղյուսակ • ԽԻԿ համակարգ
Դասի ընթացքը	**Սկիզբ.7-10 ր՝ խթանման փուլ**-Մտագրոհման մեթոդի կիրառմամբ, հարց ու պատասխանի միջոցով ներկայացնել • Ինչ ռազմա-քաղաքական գործողություններ իրականացվեցին ինքնավար Սյունիքում • Համեմատելով զուգահեռներ անկցանել Սյունիքի հերոսամարտի և Արցախյան պատերազմի միջ **15-20 ր՝ իմաստի ընկալման փուլ**- Կարճ դասախոսության միջոցով սահուն անցում կատարելով ներկայացնել նոր թեման՝ Սյունիքի հերոսամարտ և Արցախ-Նախիջանի հիմնախնդիրներ **7- 10 ր՝ կշռադատման փուլ**- Ամփոփելով թեման՝ իմի բերել դասի առանցքային կետերը, գրատախտակին գծել և աշակերտների մասնակցությամբ լրացնել «պատմական փաստերի» Մ-աձև աղյուսակը Հիմանհարց | տարեթիվ | արդյունք [illegible]
Գնահատում	Հայեցի, գրագետ և վերլուծական մտքեր արտահայտած 3 աշակերտի գնահատել

Տնային հանձնարարություն	• Թեմա 6. Խորհրդային Հայաստանի տարածքային հիմնախնդիրները (1920-1922թթ.) Դաս 2. Պայքար Նախիջևանի, Զանգեզուրի և Արցախի համար Տետրերում լրացնել վերոնշյալ Մ-աձև աղյուսակը